



Dr Michael Kambeck
Secretary General
Phone +32 484 75 28 25
Email michael.kambeck@eufoa.org

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 6 մարտի 2012

Այսօր մեկնարկեցին ԽՀԱԱԳ բանակցությունները. ՀԵԲ-ի հետազոտությունը ամենալայն հնարավոր համաձայնության կոչ է անում Հայաստանում:

Այսօր՝ 2012 թ.-ի մարտի 6-ին, Եվրահանձնաժողովի նախագահ Խոսե Բարոզոն և Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնապես հայտարարեցին Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու անդամակցմանը /ԽՀԱԱԳ/ միտված բանակցությունների մեկնարկը: Երկար ժամանակ է, ինչ Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ կազմակերպությունը խրախուսում է այս բանակցությունները և այժմ ողջունում է դրանց մեկնարկը: Այսօր մենք հրապարակում ենք մի հետազոտություն՝ «Ազատ առևտուր Եվրոպայի հետ. մրցակցություն և աճի խթանում» խորագրով: Այն անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում հասկանալու համար ԽՀԱԱԳ-ն և հայաստանյան իրականությունը:

«ԽՀԱԱԳ-ն Հայաստանի տնտեսությունը խթանելու ներուժ ունի, քանի որ այն կնպաստի անհրաժեշտ բարեփոխումների գործընթացի արագացմանը: Պատշաճ կերպով իրականացվելու դեպքում՝ այն կարող է առաջարկել մի նոր հեռանկար Հայաստանի տնտեսության համար, ապահովել մուտք դեպի Ընդհանուր Եվրոպական Շուկա, թեթևացնել հայ-թուրքական սահմանի փակ լինելու հետևանքները և, առհասարակ, համապատասխանեցնել Հայաստանի չափանիշները Եվրոպական մակարդակին», - մեկնաբանում է ՀԵԲ-ի ավագ գիտաշխատող Դոկտոր Մարգիս Ղազարյանը:

«Լավ է, որ վերջին ամիսների ընթացքում Հայաստանի կառավարությունը ցուցաբերեց այն արագությունն ու վճռականությունը, որն անհրաժեշտ էր այս նախագծի գործարկման համար: Այժմ անհրաժեշտ է հայ հասարակությանը բացատրել առավելություններն ու մարտահրավերները և հասարակության մեջ ստեղծել ամենալայն հնարավոր համաձայնությունը: Տաքսու վարորդները, ռեստորանի շեֆ խոհարարները, բանկերը, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև այսպես կոչված օլիգարխները՝ բոլորը համախմբված են առավել արդյունավետ և աճող շուկայի շահի շուրջ, սակայն բոլորը կհանդիպեն նաև որոշակի փոփոխությունների և երբեմն անհրաժեշտ միանվագ ներդրումների: Որպեսզի այս ամենը հաջողի, երկիրը պետք է համախմբվի այս նոր ընդհանուր նպատակի տեսլականի շուրջ: Եթե սա տեղի ունենա, ապա Հայաստանի տնտեսությունն ի գործ է դառնալու նոր «Արևելքի Նորվեգիա կամ Շվեյցարիա», - մեկնաբանում է ՀԵԲ-ի Գլխավոր Քարտուղար Դոկտոր Մայքլ Կամբեկը:

EuFoA is happy to provide commentary or background analysis in English, German, French, Italian, Polish, Russian and Armenian. Members of the Europe-Armenia Advisory Council may also be available for comments; for enquiries please contact our secretariat.

For more information on EuFoA and the Europe-Armenia Advisory Council, please visit our website at www.EuFoA.org.

High resolution picture material is always available on our website and upon request. It is free to use with a reference "Copyright: www.EuFoA.org".